ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՆԵԼԼԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ

ԱՎԱՆԴՈՒՅԹԸ ՈՐՊԵՍ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌՈՒՑԱՐԿՄԱՆ ԵՂԱՆԱԿ

Թ.00.04 - «Սոցիալական փիլիսոփայություն, բարոյագիտություն» մասնագիտությամբ փիլիսոփայական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2015

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանի փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի գիտական խորհրդում

Գիտական ղեկավար՝	փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Էդ. Ա. Հարությունյան
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Ե. Մկրտիչյան
	փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ Մ. Հ. Դեմիրճյան
Առաջատար կազմակերպություն՝	Երևանի պետական տնտեսագիտական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2015թ. մայիսի 27-ին ժամը 15:00-ին Երևանի պետական համալսարանում գործող ԲՈՀ-ի Փիլիսոփայության և սոցիոլոգիայի 013 մասնագիտական խորհրդի նիստում:

Մասնագիտական խորհրդի հասցեն՝ 0025, ք. Երևան, Աբովյան փ., 52ա, Երևանի պետական համալսարան:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանի գիտական աշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքված է 2015թ. ապրիլի 27-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար՝ փ.գ.թ., դոցենտ Գ. Ա. Սողոմոնյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության արդիականությունը: Ժամանակակից հասարակությունները փոփոխվում են աննախադեպ տեմպերով, փոխվում են համակեցության արժեքներն ու նորմերը և այս համատեքստում համակարգապահպան նշանակություն ունեցող նախորդ սերունդների կենսափորձի, համակեցության կազմակերպման սկզբունքների, սովորույթների ու ավանդույթների նորովի իմաստավորումը դարձել է սոցիալական կյանքի արդիականացման կարևոր նախապայման: Այս առնչությամբ մարդկային հարաբերությունների կազմակերպման, կանոնակարգման և կառավարման, ինչպես նաև անհատական և խմբային վարքի օրինաչափությունների ուսումնասիրման տեսանկյունից հասարակական կյանքում ավանդույթների տեղի ու դերի ուսումնասիրությունը ձեռք է բերել տեսական ու գործնական նոր հնչեղություն:

Քաղաքակրթական զարգացումների ներկա փուլում, երբ առաջընթացի և սոցիալական փոխակերպումների տեմպերը խիստ բարձր են, անկայունությունն ու նորարարությունը դարձել են հասարակական կյանքի բնութագրական հատկանիշներ: Բանն այն է, որ սոցիալական տարածաժամանակային նոր իրավիճակում հայտնված հասարակությունը կանգնած է կտրուկ փոփոխությունների առջև, որոնք իրենց հետ բերում են ոչ միայն հասարակության վերակառուցման, նոր սոցիալական ինստիտուտների ներմուծման և գործառության անհրաժեշտություն, այլև հասարակության մշակութային, սոցիալ-հոգեբանական հենքի համարժեք փոփոխությունների անհրաժեշտություն: Հասարակությունը ներկայանում է որպես բարդ սոցիոմշակութային համակարգ, որտեղ բացահայտվում են պատմականորեն կուտակված գործունեության, մարդկային փոխհարաբերությունների և սոցիալական փորձի սերնդեսերունդ փոխանցումն ապահովող ավանդույթները:

Մասնագիտական գրականության մեջ ավանդույթ են դիտարկվում պատմականորեն ձևավորված և սերնդեսերունդ փոխանցվող սոցիոմշակութային ժառանգության այն տարրերը (գաղափարներ, սովորույթներ, ծեսեր, վարքի նորմեր, կարծրատիպեր և այլն), որոնք հասարակական կյանքում աչքի են ընկնում կայունությամբ ու գործառական տևողականությամբ: Որոշ իմաստով կարելի է ասել, որ ավանդույթը մի կողմից կենսափորձի տարրերի ընտրողական ամրագրման արդյունք է, մյուս կողմից՝ կյանքի կազմակերպման ու կանոնակարգման մշակույթի ձևավորման ու ամրապնդման գործընթաց: Նկատենք, սակայն, որ հասարակական կյանքի տնտեսական, քաղաքական ու սոցիոմշակութային ոլորտների զարգացման ընթացքում վերափոխվում է նաև մարդկանց կենսակերպը, ձևավորում են համագործակցության նոր ձևեր ու սոցիոմշակութային նոր ավանդույթներ՝ պահպանելով «հնի» և «նորի» փոխհարաբերակցությունը և դրանց հնարավոր հակադրությունը: Մի բան ակնհայտ է, սակայն, որ պատմության տարբեր ժամանակահատվածներում սոցիալական համակարգերը գոյատևում են այն բանի շնորհիվ, որ նրանք որոշակի մեխանիզմների օգնությամբ համալրվում են նոր սոցիոմշակութային արժեքներով: Սոցիալական համակարգերի վերարտադրման ընթացքում թեև անցյալի արժեքային հարացույցները ենթարկվում են փոխակերպումների, բայց պահպանում են իրենց գործառույթները և կառուցվածքային բնութագրերը: Սա տեղի է ունենում ավանդույթների հենքի վրա, քանի որ ավանդույթները կյանքն արժևորող և

ներդաշնակող կառուցողական արժեքներ են: Փաստորեն, հասարակական կյանքում ավանդույթների էության, տեղի և դերի պարզաբանումը հնարավորություն է ընձեռում ճիշտ գնահատելու հնի և նորի փոխհարաբերությունը, խնդիր, որը բոլոր ժամանակներում եղել ու մնում է արդիական:

Սոցիալական կյանքում ավանդույթների արդիականությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ դրանք անմիջականորեն առնչվում են հասարակության պատմական անցյալի առանցքային իրադարձությունների իմաստավորմանը, ազգային ինքնության պահպանմանը, ազգային նույնականության հաստատմանը, ազգային սոցիոմշակութային արժեքներին, սոցիոմշակութային հիշողությանը, առօյա կյանքի արժեքային կողմնորոշումներին:

Հիմնախնդրի արդիականությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ արագ փոփոխվող ու նորացվող ժամանակակից աշխարհում կյանքի կազմակերպման ու կանոնակարգման ազգային ավանդույթներն ու արժեքային ողջ համակարգը մի կողմից հայտնվել են արդիականացման անհրաժեշտության առջև, ենթարկվում են սոցիոմշակութային «ճառագայթման», մյուս կողմից, սակայն, պարտավոր են պահպանել սեփական ինքնության ազգային հիմունքները: Այս տեսակետից ավանդույթներն ու սովորույթները հանդես են գալիս որպես ազգային ինքնության, հոգեբանության, բնավորության ու հոգեկերտվածքի վերարտադրման հուսալի մեխանիզմներ: Բանն այն է, որ յուրաքանչյուր ազգ ինքն է մոդելավորում իրեն՝ ավանդույթներից վերցնելով այն ամենը, ինչը համապատասխանում է իր հոգեկերտվածքին և, միաժամանակ, համահունչ է ժամանակի պահանջներին: Ի հավելումն ասվածի, հարկ է նկատել նաև, որ փոխակերպվող և անցումային արդի հասարակություններում «արժեքների արմատական փոփոխությունը», նախկինում ձևավորված արժեքների վերաիմաստավորումը, ինչպես նաև սոցիալ-տնտեսական, քաղաքական ու մշակութային նոր ինստիտուտների ձևավորումը վտանգել են ներհամակարգային կայունության և հուսալիության սոցիոմշակութային հիմունքները: Այս համատեքստում ավանդույթների դերն ու նշանակությունն ավելի են կարևորվում, քանի որ միայն կայուն արժեքներ ունեցող հասարակական համակարգը կարող է ապահովել ներդաշնակ ու նպատակաուղղված գործունեություն:

Քաղաքակրթությունների զարգացման պատմությունը ցույց է տալիս, որ սոցիալական համակարգերի ձևավորման, զարգացման և վերարտադրման տրամաբանությունը ներքնապես հակասական է: Սոցիալական կյանքին մի կողմից բնորոշ են հարաբերությունների կարգավորման կայուն արժեքների, նորմերի, ավանդույթների ու գաղափարների հաստատուն համակարգեր, առանց որոնց հասարակությունը չի կարող պահպանել իր որակական որոշակիությունը, մյուս կողմից՝ սոցիալականության հիմնական բնորոշիչներից են հարատև փոխակերպումներն ու նորացումը, որոնց շնորհիվ մշտապես փոխակերպվում են նորմատիվ ու արժեքային համակարգերը, ավանդույթներն ու կարծրատիպերը, որպեսզի պահպանեն իրենց գործառական առանձնահատկությունները: Այս առնչությամբ նոր հնչեղություն են ձեռք բերում վարքի կարգավորման ծիսական ձևերի ու եղանակների, ինչպես նաև կենսափորձի սոցիոմշակութային համակարգերի գործառական հիմնահարցերը: Հանրահայտ փաստ է, որ վարքի կարգավորման նորմատիվ և սոցիոմշակութային համակարգերը, բարոյական և իրավական արժեքները, սովորույթները, ծեսերն ու ավանդույթները սոցիալական կյանքի մշակույթի կարևոր

բաղկացուցիչներ են: Այս իմաստով յուրաքանչյուր հասարակության կյանքի մշակույթը սոցիոմշակութային արժեքների այն համակարգն է, որի օգնությամբ մարդիկ սոցիալիզացվում և ձևավորում են աշխարհի նկատմամբ իրենց վերաբերմունքը:

Հիմնախնդրի գիտատեսական մշակվածության աստիճանը: Հիմնախնդրին առնչվող հետազոտությունները պայմանականորեն կարելի է բաժանել մի շարք տեսանկյունների (պատմագիտական, ազգագրական, սոցիոլոգիական, մշակութաբանական, տնտեսական և, վերջապես, փիլիսոփայական): Մեկնաբանությունների նման բազմազանությունը իր մեջ ներառում է որոշակի արժեք ներկայացնող գիտակցության ձևերի և վարքի նորմերի մի ողջ համալիր, որոնց օգնությամբ հնարավոր է բացատրել անցյալի և ներկայի կապն ու փոխհարաբերությունը:

Որպես սոցիոմշակութային կեցության կարևորագույն բաղկացուցիչ, ավանդույթների դերի և գործառության հարցերը Նոր ժամանակի փիլիսոփայության մեջ դիտարկվել են հասարակության և մշակույթի գործառական օրենքների, գիտության և կրոնի փոխհարաբերության դիտանկյունից (Ֆ. Բեկոն, Թ. Հոբս, Ջ. Վիկո, Ի. Հերդեր): Լուսավորականության դարաշրջանում ավանդույթների հիմնահարցը ձեռք է բերում նոր հնչեղություն և հիմնականում քննարկվում է պատմական ու մշակութային առաջընթացի համատեքստում (Ֆ. Վոլտեր, Ժ. Ռուսսո, Ն. Կոնդորսե և այլն): Արդեն 19-րդ դարից սկսած ավանդույթների հիմնախնդիրը դառնում է տարբեր գիտակարգերի (սոցիոլոգիա, ազգագրություն, փիլիսոփայություն, հոգեբանություն և այլն) ուսումնասիրման օբյեկտ (Օ. Կոնտ, Հ. Սպենսեր, Գ. Հեգել, Կ. Մարքս, Ֆ. Նիցշե, Օ. Շպենգլեր, Վ. Դիլթայ, Հ. Գադամեր, Մ. Վեբեր, Է. Դյուրկհեյմ, Ն. Բերդյաև, Գ. Լեբոն, Կ. Մանհայմ և այլն): Թվարկված հեղինակները ավանդույթները հիմնականում քննարկում են համակարգապահական գործառույթների համատեքստում և ձևավորում մի շարք հայեցակարգեր.

- ավանդույթները որպես հասարակական զարգացմանը խոչընդոտող երևույթ (Գ. Հեգել, Կ. Մարքս, Ֆ. Նիցշե, Կ. Մանհայմ),
- ավանդույթները որպես անցյալը ներկայի հետ կապող երևույթ (Ն. Բերդյաև, Է. Հուսեռլ),
- ավանդույթները որպես մշակութային հիշողություն (Վ. Դիլթայ, Գ. Լեբոն),
- ավանդույթները որպես սոցիալական սուբյեկտի վարքը կարգավորող գործոն (Մ. Դյուֆրեն, Մ. Վեբեր, Կ. Պոպեր),
- ավանդույթները որպես ազգային մշակույթներն ու քաղաքակրթությունները տարբերակող գործոն (Է. Շիլզ, Բ. Ակտոն, Պ. Բոյեր, Յու. Բրոմլեյ):

Հետազոտության նպատակն ու խնդիրները: Ատենախոսության նպատակը ավանդույթների, որպես սոցիալական համակարգի կառուցարկման եղանակի, կենսափորձի սոցիոմշակութային համակարգի և սոցիոմշակութային հիշողության սոցիալ-փիլիսոփայական վերլուծությունն է: Նշված նպատակն իրագործելու համար անհրաժեշտ է եղել.

- վերլուծել ավանդույթների տեղն ու դերը սոցիալական համակարգում,
- քննարկել հասարակական հարաբերությունների, նորմերի ու արժեքների վերարտադրության առանձնահատկությունները, պարզաբանել դրանց շարժառիթներն ու մեխանիզմները,

- սերունդների կենսափորձի փոխանցման համատեքստում վերլուծել ավանդույթների այն հնարավորությունները, որոնց օգնությամբ իրացվում է ժառանգորդման և ինքնության պահպանմանը միտված սերնդափոխումը և սոցիալական համակարգի անվթար գործառությունը,
- ավանդույթը դիտարկել որպես սոցիոմշակութային հիշողություն, իսկ հիշողությունը որպես ավանդույթի ճանաչման, պահպանման և փոխանցման գործոն,
- հիմնավորվել այն թեզը, որ էթնիկական ավանդույթը ապահովում է էթնոմշակույթի կայունությունը, իրականացնում է էթնոամբողջարկման և էթնոտարբերակման կարևոր գործառույթներ, ըստ այդմ դառնալով էթնիկական ընդհանրության և նույնականության պահպանման, մշակութային արժեքների, իմաստների և խորհրդանիշերի փոխանցման սոցիոմշակութային մեխանիզմ:

Հետազոտության մեթոդաբանական հիմքերը: Որպես ատենախոսության մեթոդաբանական հիմք օգտագործվել է սոցիալ-փիլիսոփայական վերլուծությունը, որը հնարավորություն է ընձեռել ոչ միայն բացահայտելու «ավանդույթ» հասկացության էութենական բովանդակությունը, այլև ներկայացնելու հասարակական կյանքում այդ երևույթի նշանակությունը: Ատենախոսության մեջ օգտագործվել են նաև պատմականության և կառուցվածքային վերլուծության մեթոդները: Կարևոր տեղ է հատկացվել արժեքաբանական մոտեցմանը, ինչը հնարավորություն է ընձեռել մանրամասնորեն վերլուծելու ավանդական և նորարարական հասարակությունները բնութագրող արժեքներն ու նորմերը: Նյութի շարադրման ընթացքում կիրառվել է հիմնախնդրային մոտեցումը, որը հնարավորություն է տվել բացահայտելու ավանդույթների մասին հետազոտությունների բազմաշերտությունը:

Հետազոտության գիտական նորույթը: Ավանդույթները համակողմանի վերլուծելով սոցիոմշակութային փոխակերպումների համատեքստում, ատենախոսն առաջադրել է գիտական նորույթ պարունակող մի շարք դրույթներ, որոնցից առավել կարևոր են.

1. ավանդույթը կենսափորձի ամրագրման, փոխանցման և վերարտադրության եղանակ է և նույնականության ձև,
2. էթնիկական ավանդույթներն էթնիկական ընդհանրության և նույնականության պահպանման, մշակութային արժեքների փոխանցման սոցիոմշակութային ձևեր են,
3. ավանդույթն իրականության հոգևոր-պրակտիկ արտացոլումն է: Այն ձևավորվում է առօրյա գիտակցության ոլորտում և ներկայացնում առօրյա փորձը,
4. ավանդույթը լինելով սոցիոմշակութային հիշողություն, վերջինս հանդես է գալիս որպես ավանդույթի ճանաչման, պահպանման և փոխանցման կարևոր գործոն,
5. հին արժեհամակարգի քայքայման հետ մեկտեղ առաջանում է նոր աշխարհայացք, որտեղ ավանդույթը հանդես է գալիս որպես հնի և նորի երկխոսության եղանակ:

Պատմահամեմատական վերլուծության միջոցով ձևակերպվել և հիմնավորվել են տեսական ու գործնական նշանակություն ունեցող ընդհանրացումներ ու հետևություններ, որոնցից առավել կարևորներն են.

- համակարգվել են ավանդույթի մասին պատկերացումները և բացահայտվել հաստատունի և փոփոխելիի առնչությունները,

- վերլուծվել է «ավանդույթ», «սոցիոմշակութային հիշողություն» և «սոցիոմշակութային առօրեականություն» կատեգորիաների փոխադարձ կապը,
- մարդկանց մտածողությունն ու վարքը կարգավորող հին, փորձարկված արժեքներն ու նորմերը երբեմն բախվում են նոր արժեքներին, որտեղ ավանդույթները հանդես են գալիս կարգավորողի դերում, ապահովում են հասարակական հարաբերությունների համակարգային փոփոխությունների տարածաժամանակային բնույթը, ժամանակի տեսանկյունից ամրագրում են ներկա և անցյալ հասարակական զարգացումը, իսկ ամեն մի նոր պատմական փուլում հասարակական հարաբերությունները ոչ միայն փոփոխվում ու թարմացվում են, այլև պահպանվում, կրկընվում, գործում ու վերարտադրվում են,
- կարևորվել են ավանդույթների, որպես սոցիալական փորձի պահպանման, վերարտադրման, փոխանցման և ամրապնդման մեխանիզմի, էթնոսի ինքնապահպանման և ինքնավերարտադրության գործառույթները,
- հիմնավորվել է հասարակության կենսագործունեության համար ավանդական աշխարհակարգի սկզբունքների նշանակությունը, ցույց է տրվել ավանդույթների ազդեցությունը հասարակական համակարգերի սոցիոմշակութային զարգացման վրա:

Պաշտպանության ներկայացված դրույթները: Ի մի բերելով սոցիալական համակարգի կառուցարկման եղանակների համատեքստում ավանդույթների տեղի և դերի մասին սոցիալ-փիլիսոփայական հետազոտությունները, ատենախոսը պաշտպանության է ներկայացրել հետևյալ տեսական դրույթները.

- ավանդույթներն իրենցից ներկայացնում են կենսափորձի սոցիոմշակութային մի համակարգ, որը սոցիոմշակութային առանձնահատուկ մեխանիզմների միջոցով անցյալի փորձը փոխանցում է հաջորդ սերունդներին՝ պահպանելով սոցիալական համակարգի օրգանական ամբողջականությունը, շարունակականությունը և վերարտադրման ունակությունը,
- սոցիալական համակարգի կառուցարկման, սերունդների կենսափորձի և կոլեկտիվ գործունեության փորձի ու կարծրատիպերի փոխանցման գործառույթների իրացման համատեքստում ավանդույթները կատարում են ազգային նույնականության պահպանման և վերարտադրման մեխանիզմների դեր,
- որպես սոցիոմշակութային հիշողություն, ավանդույթները սոցիալական համակարգի կառուցարկմանը մասնակցում են առօրեականության մեջ անձի ներառման մեխանիզմի գործառույթով՝ դրանով իսկ կատարելով անձնային կյանքի կազմակերպման, կանոնակարգման և հարմարման լրացուցիչ գործառույթ,
- որպես մարդկային գործունեության ձևայնացված կառուցվածքների շարժում, ավանդույթները փոխակերպվող հասարակություններում մի կողմից աչքի են ընկնում իրենց պահպանողականությամբ, մյուս կողմից՝ փորձում կուտակված առաջադիմական գաղափարների միջոցով նպաստում են ժամանակի այլընտրանքային աշխարհում նորարարության «ավանդականացմանը»:

Ատենախոսության տեսական և գործնական նշանակությունը: Հետազոտության մեջ առաջադրված հարցադրումները, կատարված ընդհանրացումներն ու եզրակացություններն ունեն տեսական և գործնական նշանակություն և կարող են.

- ժամանակակից հասարակության սոցիոմշակութային վերլուծությունների համար կատարել մեթոդաբանական ուղեցույցի դեր,
- նպաստել փոխակերպվող հասարակությունների սոցիոմշակութային վիճակը և գործառության առանձնահատկությունները բնութագրող կատեգորիալ համակարգի ձևավորմանն ու բովանդակային հստակեցմանը,
- օգտագործվել ավանդույթների և նորարարության փոխհարաբերության օրինաչափությունների և արդի միտումների ուսումնասիրություններում,
- նպաստել ազգային սոցիոմշակութային ինքնության մասին ամբողջական տեսության ստեղծմանը,
- օգտագործվել փիլիսոփայական, սոցիոլոգիական, պատմագիտական և ազգագրական հետազոտություններում:

Հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել ԲՈՒՀ-երում դասավանդվող «Փիլիսոփայություն», «Սոցիալական փիլիսոփայություն», «Սոցիոլոգիա», «Ազգագրություն» և «Մշակութաբանություն» դասընթացներում:

Ատենախոսության փորձաքննությունը: Ատենախոսության առանցքային գաղափարները, դրույթներն ու ընդհանրացումները քննարկվել են.

- ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի գիտական նստաշրջաններում (2008-2014):
- ԵՊՀ սոցիալական փիլիսոփայության և բարոյագիտության ամբիոնի տեսական-սեմինար քննարկումներում (2000-2014):
- ԵՊՀ սոցիալական փիլիսոփայության և բարոյագիտության ամբիոնի՝ պետբյուջեից ֆինանսավորվող «Ազգային ինքնություն և կյանքի ազատական մշակույթ» գիտական թեմայի (ղեկ. պրոֆ. Է. Ա. Հարությունյան) հետազոտման ընթացքում (2006-2008):
- ԵՊՀ սոցիալական փիլիսոփայության և բարոյագիտության ամբիոնի՝ պետբյուջեից ֆինանսավորվող «Արդիականության հոգևոր ճգնաժամը և նրա դրսևորման առանձնահատկությունները հայոց փոխակերպվող սոցիումում» գիտական թեմայի (ղեկ. պրոֆ. Է. Ա. Հարությունյան) հետազոտման ընթացքում (2008-2011):

Ատենախոսության պլան-ուրվագիծը քննարկվել է ԵՊՀ սոցիալական փիլիսոփայության և բարոյագիտության ամբիոնում (2008թ. սեպտեմբերին): Ատենախոսության ամբողջական շարադրանքը նույն ամբիոնում քննարկվել է 2014թ.սեպտեմբերի 24-ին և 2015թ.մարտի 23-ին ու երաշխավորվել հրապարակային պաշտպանության:

Ատենախոսության կառուցվածքն ու ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից (3-ական պարագրաֆ), եզրակացությունից և գրականության ցանկից: Աշխատության ծավալը 143 էջ է:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորվում է հետազոտվող թեմայի արդիականությունը, մշակվածության աստիճանը, ձևակերպվում են հետազոտության նպատակը, տեսանկյունը, խնդիրները և մեթոդաբանական սկզբունքները: Ներկայացվում է ատենախոսության գիտական նորույթը, տեսական ու գործնական նշանակությունը:

Առաջին գլուխը՝ **«Ավանդույթները որպես կենսափորձի սոցիոմշակութային համակարգ»,** նվիրված է ավանդույթների էության, տեղի և դերի պարզաբանմանը, ավանդույթների հիմնական գործառույթների սոցիալ-փիլիսոփայական վերլուծությանը, ավանդույթների, որպես ազգային ինքնության և նույնականության վերարտադրման մեխանիզմի բացահայտմանը:

«Ավանդույթները որպես կոլեկտիվ գործունեության կարծրատիպեր» ենթագլխում ճշգրտվում են հետազոտության ելակետային հասկացությունները, տրվում է ավանդույթների, որպես ժառանգորդման կարևորագույն սոցիոմշակութային բաղադրիչների վերլուծությունը: Ավանդույթները կատարում են անցյալի և ներկայի միջև կապող օղակի դեր, պահպանում, ամրագրում և հասարակական հարաբերություններում վերարտադրում են նախորդ սերունդների կենսափորձը, որով և իրականացվում է ժառանգորդման և ինքնության պահպանմանը միտված սերնդափոխումը:

Ատենախոսը նշում է, որ չնայած ավանդույթների վերաճնության խնդրակարգի նկատմամբ օրավուր աճող հետաքրքրությանը, տակավին չի ստեղծվել «ավանդույթ» հասկացության հստակ և միանշանակ հայեցակարգ: Սոցիալական գիտելիքի տարբեր ոլորտներում ավանդույթները ձեռք են բերում յուրահատուկ նշանակություն և բովանդակային յուրահատուկ ծանրաբեռնվածություն: Հասարակագիտական ըմբռնման տեսակետից ավանդույթները սոցիալական և մշակութային ժառանգության այն տարրերն են, որոնք փոխանցվում են սերնդեսերունդ և տևական ժամանակ պահպանում իրենց գործառական առանձնահատկությունները: Այս դեպքում որպես ավանդույթներ են հանդես գալիս հասարակական որոշակի դիրքորոշումները, վարքի նորմերը, արժեքները, գաղափարները, սովորույթները, ծեսերը և այլն: Արվեստի տեսանկյունից ավանդույթը գեղարվեստական զարգացման անհրաժեշտ գործոն է: Ազգագրության շրջանակներում ավանդույթը սերնդեսերունդ է փոխանցում մարդկային գործունեության կոլեկտիվ փորձը՝ հանդես գալով որպես մշակութային ժառանգության ու ստեղծագործության կապող օղակ: Փիլիսոփայության տեսանկյունից ավանդույթը մարդկանց հաղորդակցության նախասահմանված ձև է և սոցիալական հաղորդակցության եղանակ, որն աչքի է ընկնում գործառական տևականությամբ ու կայունությամբ: Մշակութաբանական մեկնաբանություններում ավանդույթը դիտարկվում է որպես փոխանցվող և վերարտադրվող սոցիալական և մշակութային ժառանգություն, որը ներառում է սոցիոմշակութային ժառանգության օբյեկտները (նյութական և հոգևոր արժեքներ), սոցիոմշակութային ժառանգորդման գործընթացները, ինչպես նաև դրա եղանակները:

Միաժամանակ ատենախոսը նշում է, որ ավանդույթների ակտիվ գործառությունը ենթադրում է սովորույթների և ծեսերի նկատմամբ կայուն վերաբերմունք, այլ կերպ ասած՝ որոշակի կարծրատիպային վարք:

Որպես սոցիալական համակարգի կառուցարկման եղանակ, ավանդույթը հասարակության մեջ մարդկանց ձևավորված կայուն հարաբերությունների և ընդհանրական նորմերի ու սկզբունքների այն ամբողջությունն է, որը որոշարկում է գործողությունների կարգն ու վարքի ծրագիրը: Ավանդույթները կազմակերպում են կենսագործունեության եղանակների, մտածողության և վարքի տիպերի վերարտադրության գործընթացը և պատմական զարգացման ընթացքում վերածվում են յուրահատուկ սոցիալական հաստատության՝ դառնալով մշակույթի և սոցիալական միջավայրի կարևոր բաղադրատարր: Այլ կերպ ասած՝ ավանդույթները հանդես են գալիս որպես կարծրատիպացված սոցիալական փորձ, մշակույթի ժառանգորդման յուրահատուկ ձև: «Ամենալայն ըմբռնմամբ՝ ավանդույթն այն ամենն է, ինչը ժառանգվում է նախնիներից: Ավելի նեղ սահմանման դեպքում ավանդույթը դիտվում է որպես սոցիալական փորձի (գիտելիք, ապրում, վարքագիծ) կայուն ձևերի ամրագրում, արմատավորում, փոխանցում և վերարտադրություն: Մեկ այլ դեպքում ավանդույթ համարվում է սոցիալական փորձի պահպանման, փոխանցման, վերարտադրման մեխանիզմը»:[1]

Երկրորդ՝ «Ավանդույթները որպես սերունդների կենսափորձի փոխանցման մեխանիզմ», ենթագլխում ցույց է տրվում, որ ավանդույթները լինելով սոցիալական համակարգի կառուցարկման եղանակ, հանդես են գալիս որպես սոցիալական այնպիսի միջոցներ, որոնք կարգավորում են հասարակական հարաբերությունները և ամրագրում այն, ինչ կա տվյալ ժամանակահատվածում, այսինքն՝ կատարում են սոցիալական մեխանիզմի դեր, փոխանցում են նախորդ սերնդի հարաբերությունները նոր սերնդին: Պահպանելով տարածված սովորույթների ձևը, որոնք իրենց հաստատունությունը գտնում են հասարակական կարծիքի մեջ, ավանդույթները դառնում են անցյալի ձեռքբերումների պահապանը: Յուրացնելով ինչ-ինչ ավանդույթներ, հաջորդ սերունդը ձևավորում է նաև իր ապրելակերպը՝ ձգտելով հնարավորինս հավատարիմ մնալ նախորդներին:

Ատենախոսի համոզմամբ, սովորույթներն ու ավանդույթները մի կողմից հանդիսանում են տվյալ հասարակական հարաբերությունների կարգավորման, իսկ մյուս կողմից՝ նոր սերունդների վերարտադրման միջոց և օրինականացնում են այն գործողությունները, որոնք ծառայում են սոցիալական համակարգի ամրապնդմանը և հետագա կայուն զարգացմանը, պահպանում նախնիների մտքի և վարքի օրինակները, նոր սերնդին հաղորդակից դարձնում նախնիների հոգևոր և նյութական արժեքներին: Մարդիկ իրենց առօրյա կյանքում չեն կարող իրականացնել համատեղ գործունեություն և շփում, եթե չառաջնորդվեն հասարակական որոշակի դիրքորոշումներով, քանի որ մարդկանց վարքի սոցիալական կարգավորումը պայմանավորված է նրանց կենսագործունեության պահանջմունքներով:

Ատենախոսի կարծիքով, ավանդույթը վարքի յուրատեսակ կարծրատիպ է, հասարակական հարաբերությունները կարգավորող համակարգ, որը ամրագրվում է մարդկային գործունեության առարկայական դրսևորումներում, նրանց հատկություններում, հարաբերություններում ու գործառույթներում: Ըստ այդմ ավանդույթները հանդես են գալիս որպես սոցիալական կենսափորձի ընտրության, փորձարկման և կուտակման

[1] **Սարգսյան Ա. Հ,** Մշակույթի տեսություն, Եր., «Տնտեսագետ», 2003թ., էջ 78:

սոցիոմշակութային համակարգ: Ընտրողական ամրագրման միջոցով ավանդույթները օրինականացնում և գործողության մեջ են դնում մարդկային կենսափորձի այն տարրերը, որոնք նպաստում են սոցիալական համակարգի ներքին կազմակերպմանն ու կայուն զարգացմանը: Այդ տեսակետից ավանդույթները ժառանգորդման այն կարևորագույն սոցիոմշակութային բաղադրիչներն են, որոնք ապահովում են սոցիալական համակարգի անվթար գործառությունը:

Երրորդ՝ «Ավանդույթները ազգային նույնականության վերարտադրման համատեքստում», ենթագլխում ավանդույթը դիտարկելով որպես սոցիալական համակարգի կառուցարկման եղանակ, ատենախոսը կարևորում է ազգային նույնականացման հիմնական օբյեկտի՝ էթնիկության դերը և քննարկում էթնիկականի ըմբռնման առնչությամբ ձևավորված երեք հիմնական տեսական ուղղությունները. պրիմորդիալիստական, ինստրումենտալ և կոնստրուկտիվիստական: Դրանցից առաջինը, որ կոչվում է նաև «նախաքաղաքական (արտաքաղաքական) նացիոնալիզմ», հիմք ընդունելով էթնոմշակութային հատկանիշները՝ ընդգծում է ցեղային նույնականացման դերը:[2] Այս դեպքում էթնոմշակութային նույնականացումն իրականացնում է հարմարվողական գործառույթ: Ստեղծված իրավիճակը դիտորդներն ընկալում են որպես «ազգային վերածնության գործընթաց», իսկ այդ գործընթացի մեջ ներգրավվածները՝ որպես «ակունքների հետ շփում», դարձ դեպի բնականը՝ երբեք չդավաճանող «յուրայինների» խմբին: Երկրորդ՝ ինստրումենտալ կամ գործիքային տեսության համաձայն էթնիկության ըմբռնումն արտահայտվում է զանգվածային տեղեկատվության միջոցներում, գիտակրթական համակարգում և իշխանության կառույցներում՝ որևէ էթնիկական ընդհանրության ինստիտուցիոնալ ներկայացմամբ և ճանաչմամբ: Վերջապես կոնստրուկտիվիստական (կառուցողական) տեսությունը էթնիկությունն ըմբռնում է ոչ թե որպես մեկընդմիշտ տրված իրողություն, այլ որպես արարման արդյունք, որպես ստեղծագործական երևակայության նորարարական գործողություն: Այստեղ էթնիկական խումբը հանդես է գալիս սուբէթնոսի ձևով, այսինքն՝ որպես որևէ էթնոսի տարածաշրջանային մաս, որն ամբողջությամբ չի ձուլվել սուբէթնոսին, ունի խոսակցական լեզվի, մշակույթի ու կենցաղի իր յուրահատկությունները, ինչպես նաև միայն իրեն բնորոշ ինքնագիտակցության ձևը:

Ատենախոսի համոզմամբ, մարդը լինելով բաց համակարգ նրա կողմնորոշումների ու վճիռների վրա կարող են ազդել նույնիսկ նրա սոցիոմշակութային նույնականության բովանդակությանը չհամապատասխանող սոցիալ-հոգեբանական ապրումները: Այդ է պատճառը, որ հաճախ էական տարբերություններ են նկատվում մարդկանց համոզմունքների և գործնական կողմնորոշումների միջև: Բանն այն է, որ նույնականացման ճգնաժամի դեպքում հասարակական կյանքի ոլորտների արդիականացումը չի ընթանում սեփական ավանդական ինքնության հիմքերին համապատասխան, որովհետև նախորդ սերնդի կուտակած փորձը, նորմերը, սոցիոմշակութային արժեքները փոփոխված նոր հանգամանքներում ոչ թե օգնում, այլ խոչընդոտում են նույնականության ձևավորմանը:

[2] Տե՛ս **Бухаева А. А.** К вопросу об истоках категории "идентичности" // Саясат Policy, 2010, № 5, էջ 63-67:

Սոցիալական համակարգի կառուցարկման հայեցակարգից ելնելով, ատենախոսը ազգային ինքնության և նույանականության կառուցարկման գործում խիստ կարևորում է ազգային ավանդույթների դերը: Հանդես գալով որպես մշակութային արժեքների, իմաստների, խորհրդանիշերի, և վերջապես, էթնիկական ընդհանրության նույնականության պահպանման և փոխանցման մեխանիզմ, էթնիկական ավանդույթն ապահովում է մշակույթի կայունությունը:

Ելնելով ազգային կենսագործունեության նախընթաց փորձի վերլուծությունից, ատենախոսը նշում է, որ ինքնանույնականությունը պահպանելու և արտահայտելու հայ ժողովրդի սոցիոմշակութային արժեհամակարգը երկփեղկված կառույց է: Մի կողմից այն միտված է անհատական կենսաձևի պահպանմանը, մյուս կողմից՝ գոյատևման ամբողջական-հավաքական կենսաձևին: Ուստի էթնոկեցության ինքնանույնականությունը պահպանելու համար պետք է ձևավորել գոյատևման կոլեկտիվ և անհատական կենսափիլիսոփայությունները համատեղող մոդել:

Երկրորդ, «Ավանդույթները որպես սոցիոմշակութային հիշողություն», գլխում քննարկվում են սոցիոմշակութային հիշողության դերը ավանդույթների վերարտադրման գործում, ավանդույթների որպես սոցիոմշակութային առօրեականության մեջ անձի ներառման մեխանիզմի, ինչպես նաև ավանդույթների և նորարարության փոխհարաբերության հիմնախնդիրների դերը փոխակերպվող հասարակությունում:

Առաջին՝ «Սոցիոմշակութային հիշողությունը որպես ավանդույթների վերարտադրման գործիք», ենթագլխում ատենախոսը քննարկում է ավանդույթների պահպանման, վերարտադրման, փոխակերպման և դրսևորման գործում սոցիոմշակութային հիշողության ունեցած առանձնահատուկ դերի և նշանակության հետ կապված հիմնախնդիրները:

Հասարակական համակարգի ամբողջականությունն ու կայունությունը էապես կախված են սոցիալական կառավարման համակարգի հուսալի գործառությունից, ինչի նախապայմանը սոցիալապես նշանակալի տեղեկատվության ամրագրման, փոխանցման, պահպանման գործառույթներով զբաղվող կառույցի առկայությունն է: Սոցիալական կյանքի մասին մարդու կենսափորձը մի յուրահատուկ հիշողություն է, առանց որի մարդկային պատմությունը ամբողջական ու համակարգված չէր լինի: Ցանկացած գործողություն և գործունեություն խարսխված է հիշողության մեջ պահված գիտելիքների որոշակի պաշարի վրա: Այն սոցիալական իրականության հիմնաքարն է, որը հանդես է գալիս որպես սոցիալական փորձի փոխանցման մեխանիզմ: Որպես այդպիսին, ատենախոսի կարծիքով, սոցիալական հիշողությունը իրականության մեջ գոյություն ունեցող ինքնուրույն երևույթ է և ունի իրեն բնորոշ կառուցվածք ու զարգացման ներքին տրամաբանություն, իսկ իբրև սոցիալական համակարգի կառուցարկման եղանակ, այն մարդու սուբյեկտիվ պատկերացումների և մտածողության միջև կապող օղակ է և կապված է անցյալի պահպանման ու գիտակցության մեջ նրա վերարտադրման ու վերակառուցման հետ: Այդ տեսակետից սոցիոմշակութային հիշողությունը հանդես է գալիս որպես մարդու մշակութային և սոցիալական գործունեության եղանակ, որի միջոցով մարդը պահպանում է անցյալը և կառուցում ապագան: Հիշողությունը ներառում է ինչպես անհատական փորձը, այնպես էլ ժառանգորդման տեղեկատվության փոխանցման

մեխանիզմները և պայմանավորված է մտապահելու, պահպանելու և վերարտադրելու եռամիասնական գործընթացներով:

Շնորհիվ սոցիոմշակութային հիշողության, հասարակությունը կարողանում է պատմական անցյալից «դուրս բերել» այն ամենակարևորն ու արժեքավորը, որն անհրաժեշտ է սոցիալական ու բնական աշխարհների հետ օպտիմալ հարաբերություններ հաստատելու համար: Սոցիոմշակութային հիշողության այս գործառույթի էությունն այն է, որ ներկայի և անցյալի կապը դարձնում է անընդհատ և հնարավորություն է տալիս կողմնորոշվելու անցյալից ներկա և ներկայից անցյալ «ուղևորվելու» դժվարին գործընթացում: Սոցիոմշակութային հիշողությունը կանխորոշում է ներհասարակական հարաբերությունների ու փոխազդեցությունների բնույթն ու առանձնահատկությունները և դրանով իսկ ուղղորդում սոցիալական համակարգի զարգացումն ու գործառությունը: Ժամանակակից մարդն օտարվելով տնտեսական, սոցիալական և հոգևոր կյանքից, փորձում է իր կյանքը ձևավորել ու կազմակերպել անհատական հարթության վրա, բայց ունենալով որոշակի ազգային ու սոցիալական ինքնություն ու պատկանելիություն (կոլեկտիվ հիշողություն), ի վերջո կյանքի կազմակերպման ու կանոնակարգման գործունեության մեջ ղեկավարվում է սոցիոմշակութային հիշողության հարացույցներով: Այս իրողությունը մեկ անգամ ևս փաստում է, որ անցյալը վերակերտվում է ներկայի պահանջներին համապատասխան և հակառակը՝ ներկան չի կարող անտեսել անցյալը:

Ատենախոսի կարծիքով, սոցիալական կյանքի զարգացման կարևոր պարադոքսն այն է, որ համակարգային փոխակերպումների ժամանակ, հատկապես երբ այդ փոխակերպումների սոցիոմշակութային հարացույցները չեն համապատասխանում տվյալ ազգային հանրույթի կենսափիլիսոփայությանը, պատմական հիշողությունը ասես ակտիվանում է, դառնում բարեփոխումները գնահատող և ուղղորդող, նրա արդյունքները մերժող կամ հաստատող «գրաքննիչ»: Այստեղից հետևում է, որ, երբ համակարգը չի ղեկավարվում անցյալն ու ներկան կապող սոցիոմշակութային մեխանիզմներով, խըզվում է ժառանգորդման հաջորդականությունը, և փոխակերպումները հարուցում են սոցիոմշակութային տատանումներ ու ճգնաժամային իրավիճակներ:

Ըստ այդմ, ատենախոսը եզրակացնում է, որ սոցիալական հիշողությունը օբյեկտիվացված և ինտերսուբյեկտիվացված բնույթի փոխգործակցության գործընթացների ամբողջությունն է, որի միջոցով իրականացվում է որոշակի տեղեկատվության պահպանումը, մեկնաբանումը և փոխանցումը, ուստի տարիներով, անգամ հարյուրամյակներով պահպանված ցանկացած տեղեկատվություն ժամանակակիցներին և ապագա սերունդներին անհրաժեշտ է, որպեսզի նախկինում կուտակված գիտելիքների և փորձի հիման վրա՝ հաշվի առնելով դրանց դրականը և բացասականը, հնարավոր լինի պահպանել ինքնությունը, միաժամանակ արդիականացնել այն:

Այնուհետև ցույց է տրվում, որ այն ամենը, ինչը ստեղծվում է ներկայում, հիմնվում է տվյալ հասարակության սոցիոմշակութային ավանդույթների վրա, իսկ դա վկայում է, որ սոցիոմշակութային հիշողությունը հանդես է գալիս որպես հասարակության սոցիալական, կրթական, մշակութային, քաղաքական, գեղարվեստական ավանդույթների հետազոտման գործիք, որի օգնությամբ պետության և ազգի սոցիոմշակութային հիշողության մեջ ամրագրված ավանդական մեթոդների հիմքի վրա ձևավորվում է նորարարական նոր համակարգը:

Ելնելով այն պնդումից, որ սոցիոմշակութային հիշողությունը ազդում է հասարակության զարգացման օրենքների և նորմերի մասին ավանդական պատկերացումների ձևավորման վրա, ատենախոսը հանգում է այն եզրակացության, որ ինչպես սոցիոմշակութային հիշողությունը, ավանդույթները նույնպես կարող են լինել երկարատև, կարճատև և օպերատիվ: Տևական փորձի հիման վրա ստեղծված ավանդույթները սերնդեսերունդ փոխանցվելով ներառվում են մարդկանց ամենօրյա կենսագործունեության մեջ: Հաջորդող սերունդների կողմից ավանդույթների պահանջված լինելու հանգամանքը դրանց երկարատևության գրավականն է, այսինքն կարող ենք ասել, որ գոյություն ունի ուղիղ համեմատական կապ ավանդույթների տևողության և սոցիոմշակութային հիշողության տևողության միջև կամ, որ նույնն է, սոցիալական հիշողության յուրաքանչյուր տեսակ պայմանավորում է ավանդույթների գոյության ու գործառության տևողությունը:

Ըստ այդմ ատենախոսը հատկապես կարևորում է սոցիոմշակութային հիշողության պահպանողական և նորարարական միտումների փոխհարաբերության հիմնահարցը և եզրակացնում, որ հասարակությունը սոցիոմշակութային հիշողությունը և ավանդույթներն օգտագործում է ոչ միայն համակարգի բարեփոխման խնդիրների լուծման նպատակով, այլև դրանց օգնությամբ, հիմք է նախապատրաստում հաջորդ սերունդների արդյունավետ կենսագործունեության համար:

Երկրորդ գլխի երկրորդ՝ **«Ավանդույթները որպես սոցիոմշակութային առօրեականության մեջ անձի ներառման մեխանիզմ»,** ենթագլխում քննարկվում է առօրեականության հիմնահարցը, որը կարելի է ներկայացնել որպես կոնկրետ համակարգում գտնվող մարդու նյութական և հոգևոր գործունեության համադրություն, որի շնորհիվ հասարակության մեջ ձևավորվում են ռացիոնալության և սոցիոմշակութային կողմնորոշումների տիպերը:

Մարդիկ իրենց առօրյա կյանքում չեն կարող իրականացնել համատեղ գործունեություն, շփում, եթե չառաջնորդվեն հասարակական որոշակի դիրքորոշումներով, քանի որ մարդկանց վարքի սոցիալական կարգավորումը պայմանավորված է նրանց կենսագործունեության պահանջմունքներով: Ավանդույթները ներառում են մարդկանց վարքի կանոններն ու նորմերը և այդ տեսանկյունից հանդես են գալիս որպես մարդկանց կենսագործունեության կարգավորիչներ: Եվ, քանի որ, ավանդույթները սերնդեսերունդ ապահովում են մարդկային փորձի պահպանումը, վերարտադրությունը և փոխանցումը ուստի դրանք հանդես են գալիս, որպես սոցիոմշակութային առօրեականության այնպիսի բաղադրիչներ, որոնք հնարավորություն են ընձեռում մարդկանց ներառվելու սոցիոմշակութային առօրեականության մեջ: «Քանի որ առօրեականությունը ձևավորվում է անհատների փոխազդեցությունից և փոխհարաբերություններից, առօրյա գիտելիքի առաջացումն ընկած է հենց այդ փոխազդեցության և փոխհարաբերությունների հիմքում»:[3] Անհատները փոխազդում են միմյանց հետ միևնույն ժամանակ կիսելով իրենց փորձը, իրենց արդեն ունեցած, կյանքի ընթացքում ձևավորված և ձեռք բերված գիտելիքները:

Առօրեականության մեջ ավանդույթները ձևավորվում և գործում են այնտեղ, որտեղ առաջանում են ժողովրդի ամենօրյա կենսագործունեության արժեքները: Որպես

[3] **Бергер П, Лукман Т.,** Социальное конструирование реальности: Трактат по социологии знания, М., «Медиум», 1995, с.47.

առօրեականության ոլորտի անմիջական բովանդակություն հանդես է գալիս մարդկային կյանքի վերարտադրությունը, որի ընթացքում մարդկանց մեջ առաջանում են որոշակի նորմեր, համոզմունքներ, սկզբունքներ, գաղափարներ և սովորույթներ:

Հասկանալի է, որ մարդու համար ավելի հեշտ է ապրել կայուն, մշտապես գործող ավանդույթների պայմաններում, քանի որ դրանք (ավանդույթները) յուրացրած անհատը վստահ է իր գործողություններում: Սակայն հասարակական հարաշարժության բեկումնային փուլերում, երբ տարատեսակ փոխակերպումների հետևանքով խախտվում է սոցիոմշակութային կյանքի նախկին հստակությունն ու որոշակիությունը, մարդիկ հաճախ չեն հասցնում հարմարվել վերափոխված նոր պայմաններին և ամենօրյա կյանքի կազմակերպումը դառնում է խնդրահարույց: Նոր միջավայրին հարմարվելու գործընթացը սովորաբար ուղեկցվում է տարատեսակ սթրեսներով: Որպես կանոն, սոցիոմշակութային միջավայրն անհատն ընտրում է կամ կամավոր-գիտակցված եղանակով, կամ հարկադրաբար՝ այսինքն՝ արտաքին հանգամանքների թելադրանքով:

Որպես սոցիոմշակութային առօրեականության մեջ անձի ներառման ցանկալի մեխանիզմ, ատենախոսն առաջադրում է մարդկանց երկխոսության եղանակը, որը ատենախոսի համոզմամբ, հնարավորություն է տալիս ինչպես տվյալ հանրության շրջանակներում իրականացնելու նույնականության գործողություններ, այնպես էլ բացահայտելու զարգացման այլ օրենքներ ունեցող միկրոաշխարհների ներկայացուցիչներից ունեցած տարբերությունները և իհարկե, որոնելու վերջիններիս հաղթահարման ուղիները:

Ժամանակակից հասարակության մեջ տեղի ունեցող նշանակալից փոփոխությունների հետևանքով խախտվում է հասարակության կայունությունը: Առօրյա կյանքում մշակույթի և բնության ռիթմերին ենթարկվող մարդու ապագան մնում է անհայտ, և նա մասամբ ապրում է կուրորեն՝ չիմանալով, թե ինչ կարող է պատահել իրեն վաղը: Նա անօգնական է բոլոր այն հանկարծակի ու չկանխատեսված իրադրությունների առջև, որոնք կարող են փոխել նրա հեռանկարային ծրագրերը, այս պատճառով իր առօրյա կյանքը փորձում է դարձնել հնարավորինս կանխատեսելի ու համակարգված: Առօրյայի կանխատեսելիությունն ու ակնհայտությունն ուղղակիորեն անհրաժեշտ են մարդուն այս աշխարհում գոյատևելու, թեկուզև իրականության և փորձի այլ ոլորտներում ստեղծագործելու, արարելու, նորույթներ ու հայտնագործություններ անելու համար, քանզի առօրյան իրականության այն ոլորտն է, որը մարդուն կապում է այլ իրականությունների հետ՝ մնալով դրանց միջև: Ինչքան էլ մարդը փորձի հեռանալ առօրյա իրականությունից, միևնույն է, որոշակի պահի նա վերադառնում է այնտեղ: Թեև առօրյան մարդու կեցության անփոփոխ, կրկնելի ու միջինացված կենցաղի ոլորտն է, բայց մարդկային և հասարակական կյանքի գոյատևման ու վերարտադրման ամենաանհրաժեշտ հիմքն ու նախապայմանն է:

Երկրորդ գլխի երրորդ՝ «Ավանդույթների և նորարարության փոխհարաբերությունը փոխակերպվող հասարակությունում», ենթագլուխը նվիրված է ավանդույթների և նորարարության փոխհարաբերության սոցիալ-փիլիսոփայական վերլուծությանը: Ատենախոսը նկատում է, որ փոխակերպվող հասարակությունում մարդիկ հայտնվում են մի իրավիճակում, ուր հնի և նորի պայքարը ձեռք է բերում արժեքային ուղղվածություն: Մարդկանց գոյատևման կենսաձևը հայտնվում է երկընտրանքի առջև, քանի որ

մի կողմից պետք է պաշտպանեն ազգային սոցիոմշակութային արժեքները, մյուս կողմից՝ պետք է կարողանան ճիշտ կողմնորոշվել մարդկության առաջընթացի հակասական քառուղիներում: Փոխակերպվող հասարակության կառուցվածքի շերտավորման հետևանքով տեղի է ունենում մարդկանց արժեմշակութային վերակողմնորոշում:

Վերլուծելով հասարակության տարաբնույթ փոխակերպումների առանձնահատկությունները՝ ատենախոսը գտնում է, որ ցանկացած սոցիալական համակարգ կյանքի սկզբունքներ ընտրելիս ղեկավարվում է կենսագործունեության նախընթաց փորձով, հետևաբար սոցիոմշակութային չափանիշները պետք է փնտրել էթնոհամակեցության հոգևոր ակունքներում:

Փոխակերպվող հասարակություններում չկա նորմերի ու արժեքների միասնական և կայուն համակարգ: Երկար տարիներ մարդկանց մտածողությունն ու վարքը կարգավորող հին, ստուգված արժեքներն ու նորմերը բախվում են նոր ու անծանոթ արժեքներին: Պատահական չէ, որ արմատական փոխակերպումների փուլում դեռևս անցյալի արժեքներով, բայց ներկայի պահանջներով ապրող մարդու սոցիոմշակութային կարգավիճակների միջև ներանձնային պայքար է ընթանում:

Ատենախոսի համոզմամբ անցումային հասարակություններում հակասություն է ծագում նաև հասարակական հին ու նոր արժեքների միջև, որը, կախված հանգամանքներից ու պայմաններից, կարող է վերաճել նաև բախման՝ ծնունդ տալով սոցիալական անոմիայի, որի ախտանիշներից են անորոշությունը, տագնապը, վախը:

Թեև սոցիալական համակարգի կառուցարկման մեջ ավանդույթների և նորարարության փոխադարձ կապն անխուսափելի է, սակայն այդ կապը հազվադեպ է լինում ներդաշնակորեն հավասարակշռված, քանի որ պատմական որոշակի շրջափուլում գերիշխում են մերթ ավանդական, մերթ՝ նորարական արժեքները: Ըստ այդմ, թե՛ ավանդույթները և թե՛ նորարարությունները կարող են հանդես գալ ինչպես հասարակական, այնպես էլ առօրյա կյանքի կազմակերպման կենտրոնաձիգ ուժերի դերում, միայն այն պայմանով, որ դրանք նպատակամղված լինեն հասարակայնորեն պահանջարկված պրակտիկ խնդիրների արդյունավետ լուծմանը: Այսպիսով, ավանդականության և նորարարության ամբողջականությունը կարող է նպաստել հասարակական համակարգի անարգել զարգացմանը:[4]

Քանի որ ավանդույթների և նորարարության փոխհարաբերության բնույթի պարզաբանման համար անհրաժեշտ է, հնարավորինս ներկայացնել հնի և նորի բովանդակային տարբերությունները, ուստի ատենախոսը բացի գործող էքստենսիվ և ինտենսիվ փոխգործակցություններից առաջարկում է դրանց փոխգործակցության մեկ այլ տիպ՝ տարբեր համակարգերի խաչասերումը, որի դեպքում փոխակերպվում են նորմատիվ-արժեքային բոլոր համակարգերը և առաջանում է հետազոտության նոր բնագավառ՝ իրեն բնորոշ նոր ավանդույթներով:

Ատենախոսության մեջ հատուկ ուշադրություն է դարձվում համաշխարհայնացման գործընթացին: Խնդիրն այն է, որ համաշխարհայնացման ժամանակակից միտումները ոչ այլ ինչ են, եթե ոչ արդիականացման պատմական որոշակի փուլ, երբ փոփոխությունների վեկտորային ամբողջական հոսքն ուղղված է տվյալ քաղաքակրթության

[4]Տե՛ս **Заславская Т. И,** Социетальная трансформация российского общества: деятельно-структурная концепция. М., «Дело», 2002, էջ 505:

արժեքների և ինստիտուտների վրա հիմնված փոխկապակցված և փոխլրացնող աշխարհի ստեղծմանը: Հաշվի առնելով արդի հաղորդակցային և տեղեկատվական տեխնոլոգիաների ընձեռած հնարավորությունները, կարելի է ասել, որ ձևավորվում է միասնական տեղեկատվական տարածություն, որն իր հերթին հանգեցնում է միօրինակ աշխարհընկալման՝ քաղաքակրթությունը գնալով ձեռք է բերում էլ ավելի մեծ ներքին միատեսակություն: Խնդիրը միատեսակ նորարարության ձևավորումն է, համաշխարհային միասնական քաղաքակրթության ստեղծումը, որը հիմնված է արժեքանորմատիվային միասնական համակարգի, վարքի մոդելների, արտադրության և սպառման միասնական ձևերի վրա: Նոր մշակութային ռեալությունն առաջարկում է արժեքների, իմաստների, վարքի կարծրատիպերի ունիվերսալ հավաքակազմ: Նոր մշակույթի շրջանակներում գոյանում են ենթամշակույթներ, որոնցից յուրաքանչյուրը պատմական նոր իրողությունների համատեքստում ջանում է յուրովի մեկնաբանել արդիականությունը:

Ատենախոսը հանգում է այն եզրակացության, որ վերափոխվող հասարակության յուրաքանչյուր տիպ մշակում է իր սոցիոմշակութային հիմունքները, որոնց ամենահուսալի չափանիշը էթնոմշակութային ժառանգության և քաղաքակրթական հիմնարար արժեքների հավասարակշռությունն է:

«Եզրակացություն»-ում ատենախոսն ամփոփում է հիմնախնդրի հետազոտման արդյունքները, ուրվագծում թեմայի հետագա ուսումնասիրության սոցիալ-փիլիսոփայական որոշ տեսանկյուններ և կատարում տեսական մի շարք ընդհանրացումներ, որոնցից առավել կարևոր են.

- ✓ ավանդույթների հասարակագիտական, մշակութաբանական, ազգագրական, գեղագիտական և փիլիսոփայական ըմբռնումների համեմատական վերլուծության արդյունքները հաստատում են, որ պատմական զարգացման ընթացքում ավանդույթները վերածվում են յուրահատուկ սոցիալական հաստատության, յուրահատուկ սոցիոմշակութային մեխանիզմի, որի օգնությամբ կառուցարկվում է հասարակության արժեքային-նորմատիվ համակարգը և նրա անվթար գործառության պայմանները: Հանդես գալով որպես կոլեկտիվ գործունեության կարծրատիպեր, ավանդույթները կազմակերպում են կենսագործունեության եղանակների, մտածողության և վարքի տիպերի վերարտադրության գործընթացը: Եվ, քանի որ, ժամանակակից մարդու ինքնորոշումն ու ինքնակառավարումը հենվում է նախորդ սերնդի ժառանգության վրա, ուստի խնդիր է առաջանում նոր սերնդի գիտակցությունը ձևավորել այնպես, որ այն ի վիճակի լինի լուծելու երկու հիմնական խնդիր. առաջին՝ հարմարվի անընդհատ փոփոխվող սոցիալական միջավայրին և երկրորդ՝ պահպանի, իրենից հետո եկող սերնդին փոխանցի նախորդ սերնդի փորձը: Արդյունքում ստացվում է, որ սոցիալական բարդ ու շարժուն ցանցում ձևավորվում են միասնական գործունեության եղանակները, որոնք նոր սոցիոմշակութային ավանդույթների ստեղծման հիմք են հանդիսանում:
- ✓ Պատմության տարբեր ժամանակահատվածներում սոցիալական համակարգերը գոյատևում են այն բանի շնորհիվ, որ նրանք որոշակի մեխանիզմների օգնությամբ համալրվում են նոր սոցիոմշակութային արժեքներով: Հանդես գալով որպես սերունդների կենսափորձի փոխանցման եղանակ, սոցիալական կենսափորձի ընտրության, փորձարկման և կուտակման սոցիոմշակութային համակարգ, ավանդույթները, կենսափորձի ընտրողական ամրագրման միջոցով, օրինականացնում և գործողության

մեջ են դնում մարդկային կենսափորձի այն բաղադրատարրերը, որոնք նպաստում են սոցիալական համակարգի ներքին կազմակերպմանն ու կայուն զարգացմանը: Ավանդույթը մի կողմից հանդես է գալիս որպես սոցիալական պայմաններին անհատի հարմարման եղանակ, մյուս կողմից՝ որպես հասարակության մեջ հարաբերությունների կարգավորման սոցիոմշակութային գործիք:

✓ Արդի քաղաքակրթական իրադարձությունների խառնարանում ճիշտ կողմնորոշվելու, քաղաքակրթական նվաճումները «ազգայնացնելու» և միաժամանակ այդ արժեհամակարգի մեջ լիովին չտարալուծվելու համար կարևորվում է ազգային ինքնության, ազգային տիպի, տեսակի պահպանումը: Դիտարկելով ավանդույթների հիմնախնդիրը ինչպես քաղաքակրթական, այնպես էլ մշակութաբանական գործոնների համատեքստում, նկատելի է դառնում այն փաստը, որ ազգային կենսագործունեության նախընթաց փորձը սերնդեսերունդ փոխանցվում է քաղաքակրթական և մշակութային՝ նույնականության պահպանման երկփեղկված կառույցների միջոցով. ավանդույթների քաղաքակրթական ուղղվածությունը նպաստում է ազգային կյանքի արդիականացմանը, իսկ մշակութային հենքը՝ ազգային կյանքի ինքնության և ինքնատիպության պահպանմանը:

✓ Ավանդույթների վերարտադրման հիմնահարցը քննարկելով սոցիոմշակութային հիշողության համատեքստում, վերլուծելով դրա կառուցվածքն ու զարգացման ներքին տրամաբանությունը, պարզ է դառնում, որ սոցիոմշակութային հիշողությունը անցյալը վերծանելու այն հոգևոր պատրաստվածությունն է, որի օգնությամբ մարդկության նախորդ կենսափորձը ներառվում է ժամանակակից սոցիոմշակութային համակարգի մեջ և նպաստում սոցիալական աշխարհի արդիականացմանը՝ պահպանելով անցյալի, ներկայի և ապագայի շարունակականությունն ու համակեցության ինտերսուբյեկտիվ բնույթը: Սոցիոմշակութային հիշողությունը դիտարկվում է որպես որոշակի չափորոշիչ, ինչը նպաստում է ավանդույթների վերարտադրմանը, և հնարավորություն է տալիս հասկանալու սոցիոմշակութային գործընթացների բնութագիրը:

✓ Մարդկային կենսագործունեության ամենօրյա կյանքը առօրեականությունն է, ուր և գործառում են ավանդույթներն ու սովորույթները՝ ապահովելով սերունդների ժառանգական կապը, սոցիալական փորձի պահպանումը, վերարտադրումը և փոխանցումը: Ավանդույթները համակեցության այնպիսի տարրեր են, որոնք առօրյա կյանքում մարդուն հաղորդում են հուսալիություն, վստահություն և ապահովվածություն, քանի որ ամենօրյա կյանքը այն մտերմիկ հարաբերությունների աշխարհն է, ուր մարդն իր արարքների ու վարքի համար պատասխանատվությունը ասես կիսում է նախնիների հետ: Այս իմաստով ավանդույթները դիտարկվում են որպես սոցիոմշակութային առօրեականության մեջ անձի ներառման մեխանիզմ:

✓ Համաշխարհայնացման արդի գործընթացների մեջ ներառվող ժամանակակից փոխակերպվող հասարակություններում ավանդույթների և նորարարական գործընթացների փոխհարաբերությունների ու առնչությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ արմատական փոխակերպումների պայմաններում ավանդույթները կատարում են սոցիոմշակութային ճգնաժամերի հաղթահարման, նոր պայմաններին հարմարման, հնի և նորի միջև պայքարի մեղմացման երկակի գործառույթ՝ մի կողմից

պահպանելով ազգային համակեցության կենսափորձը, մյուս կողմից՝ նպաստելով նրա արդիականացմանը:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Ավանդույթների և նորարարության փոխհարաբերությունը սոցիալական համակարգում, «Արդիականության մարտահրավերները. փիլիսոփայական և հոգեբանական հիմնախնդիրներ» ԵՊՀ 95-ամյակին և ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի 50-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2014, էջ 54-56:
2. Ավանդական սոցիոմշակութային արժեքների և հասարակության փոխազդեցության մոդելը, «Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն» 140.4, 2013, էջ 42-48:
3. Տեղեկատվական հասարակությունը և նոր սոցիոմշակութային համակարգը, «Տեսական և կիրառական հոգեբանության արդի հիմնախնդիրները», IV միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, «Էդիտ Պրինտ», 2013թ, էջ 9-12:
4. Հիշողությունը որպես սոցիոմշակութային ժառանգության մեխանիզմ, «Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ»: Միջբուհական կոնսորցիումի գիտական հանդես, 1/4 /-Եր.: «Զանգակ-97», 2009, էջ 168-174:
5. Ազգային ինքնության և նույնականության հիմնախնդիրները համաշխարհայնացման համատեքստում, «Անձի զարգացման հիմնախնդիրները», միջազգային գիտաժողովի նյութեր, (23-24 հոկտեմբեր), Երևան, ԵՊՀ հրատ., 2009, էջ 6-10:
6. Ավանդույթների գործառնական առանձնահատկությունները արդի համաշխարհայնացման համատեքստում, «Անցումային հասարակություն. սոցիոմշակութային փոխակերպումներ» (Հոդվածների ժող.), Պր.4, Եր., «Լիմուշ», 2008, էջ 70-79:
7. Անհատական և կոլեկտիվ ինքնության սոցիոմշակութային առանձնահատկությունները, «Անցումային հասարակություն. Սոցիոմշակութային փոխակերպումներ», Հոդվածների ժողովածու, Պր. 5, Եր., «Լիմուշ», 2008, էջ 100-108:
8. Ավանդույթները որպես ազգային բնավորության ձևավորման և պահպանման մեխանիզմ, «Փիլիսոփայության պատմություն և արդիականություն»: Գիտական հոդվածների ժողովածու, Եր., «Լիմուշ», 2008, էջ 86-98:
9. Ծեսը որպես սոցիոմշակութային հիշողություն, «Անցումային հասարակություն. Սոցիոմշակութային փոխակերպումներ» (Հոդվածների ժողովածու), Պր. 3, Եր., «Ասողիկ», 2007, էջ 181-194:
10. Ավանդույթների դերը հասարակական հարաբերությունների գործառնական համակարգում, «Իմաստասիրական անդրադարձներ»: Գիտական հոդվածների ժողովածու, Եր., Երևանի պետ. համալս. հրատ., 2006, էջ 156-166:

Алавердян Нелли Алавердовна

“ТРАДИЦИЯ КАК СПОСОБ КОНСТРУИРОВАНИЯ СОЦИАЛЬНОЙ СИСТЕМЫ”

Диссертация на соискание ученой степени кандидата философских наук по специальности 09.00.04 «Социальная философия, этика».
Защита состоится 27 мая 2015 года в 15:00 на заседании специализированного совета Философии и социологии 013 ВАК в ЕГУ, по адресу: 0025, г.Ереван, улица Х.Абовяна 52а, Ереванский государственный университет.

Резюме

В современном трансформационном обществе в процессе конструирования и упорядочивания общественной жизни, а также функционирования социокультурных принципов, передачи жизненного опыта, формирования национальной идентичности особое теоретическое и практическое звучание приобрела новая интерпретация социокультурных функций традиции. С одной стороны, социальной жизни присущи постоянные системы стабильных ценностей, норм, традиций и идей, направленные на упорядочивание отношений, без чего общество не сможет сохранить свою качественную определенность; с другой, в качестве одной из основных характеристик социальности выступают постоянные трансформации и обновления, во время которых непрерывно меняются нормативные и ценностные системы, традиции и стереотипы, что необходимо для сохранения функциональных особенностей.

На современном этапе цивилизационного развития общество, очутившееся перед необходимостью резких изменений, которые приводят не только к преобразованиям социальной системы, к необходимости внедрения и функционирования новых социальных институтов, но и неизбежности осуществления соответствующих культурных и социально-психологических изменений.

Общество предстает в качестве сложной социокультурной системы, в которой раскрываются исторически накопленные и обеспечивающие передачу социального опыта из поколения в поколение традиции деятельности и межличностных отношений. Будучи одним из видов социального регулирования человеческого поведения, традиции сохраняют, закрепляют и в системе общественных отношений воспроизводят опыт предшествующих поколений. В процессе исторического развития традиции преобразовываются в особые социальные институты, особые социокультурные механизмы, с помощью которых конструируется ценностно-нормативная система общества и разрабатываются условия его оптимального функционирования. В разные исторические периоды социальные системы продолжают свое существование за счет того, что благодаря определенным механизмам, они периодически пополняются все новыми социокультурными ценностями. Традиции, будучи способом передачи жизненного опыта из поколения в поколение, а также, являясь социокультурной системой выбора, опробирования и накопления социального опыта, за счет избирательного фиксирования социальной практики, узаконивают и обращают в действие те элементы жизненного мира

человека, которые способствуют внутренней организации и стабильному развитию социальной системы. С одной стороны, традиция выступает как способ адаптации социального индивида, с другой – как социокультурное средство регулирования отношений в обществе.

В социальной жизни актуальность традиций обусловлена тем обстоятельством, что они непосредственно связаны с осмыслением осевых событий исторического прошлого, с сохранением национальной идентичности и ее утверждением, с национальными социокультурными ценностями, социокультурной памятью, ценностными ориентирами повседневной жизни.

Социокультурная память, рассматриваемая в качестве средства конструирования социальной системы, становится тем элементом духовного декодирования прошлого, с помощью которого предшествующий опыт включается в современную социокультурную систему и, сохраняя непрерывную связь прошлого, настоящего и будущего, а также обеспечивая интерсубъективный характер сосуществования, способствует модернизации социального мира. Социокультурная память рассматривается в качестве определенного критерия, что обеспечивает воспроизводство традиций, а также понимание характеристик социокультурных процессов. На современном этапе цивилизационного развития социокультурная память рассматривается как средство модернизации жизни и программирования будущего. Несмотря на то, что современный человек, отчуждаясь от экономической, социальной и духовной жизни, пробует организовать свою жизнь в индивидуальной плоскости, тем не менее он обладает определенной национальной и социальной идентичностью и принадлежностью (коллективная память), а в своей деятельности по организации и упорядочению жизни в конечном счете руководствуется парадигмами социокультурной памяти.

Традиции как социокультурный феномен обеспечивают надежность, уверенность и стабильность в повседневной жизни, являясь миром тех близких отношений, в системе которых человек как бы делит ответственность за свои действия и поведение со своими предками.

Традиции, как способ социального конструирования, с одной стороны выражают стабильность, и как таковые наделены свойством постоянной передачи норм из поколения в поколение, с другой стороны - являются базовой платформой для инноваций.

В зависимости от особенностей национальной идентичности и жизненного опыта, каждое из современных трансформационных обществ, разрабатывает свои социокультурные основы регулирования жизнедеятельности, главным критерием надежности которых является равновесие этнокультурного наследия и основных цивилизационных ценностей. С этой точки зрения традиция – это не только стабильный и надежный хребет национального общества, но и основа его обновления и модернизации.

Традиции в процессе развития общества, обеспечивают внедрение инноваций, что сообщает системе динамичную стабильность. Способность передачи традиций из поколения в поколение является тем определяющим фактором самовоспроизводства общества, который на достаточно длительном историческом этапе обеспечивает существование и развитие данной социальной системы.

Alaverdyan Nelli Alaverdi

"THE TRADITION AS A MODE OF CONSTRUCTING THE SOCIAL SYSTEM"

Thesis for Receiving Academic Degree of Candidate of Philosophycal Sciences Area of specialization: "Social Philosophy, Ethics"
The dissertation defense will be held on 27 May, 2015, at 15.00 at Yerevan State University at the committee meeting of Philosophy and Sociology with the speciality of HCC 013,
Address: 0025, 52a Abovyan str., YSU, Yerevan

Resume

At present, when the world is in transformation, a fresh interpretation of social-cultural function of traditions in construction and regulation of social life, social-cultural principles of coexistence, transferring of life-experience and formation of national identity have acquired a new theoretical and practical significance. Social life on the one hand is characterized by stable systems of values, norms, traditions and ideas that regulate relations, which enable the society to maintain its qualitative specificities, and on the other hand, it is characterized by continuous change and renewal. During this process of change and renewal normative and value systems, traditions and stereotypes continuously change to maintain their functional peculiarities. Societies face abrupt changes in present day stage of political developments and this imposes not only the necessity of reconstructing the society, introduction of new social institutes and functions, but also of equivalent changes of cultural, social-psychological basis of the society. Society is a complex social-cultural system, where traditions of historically accumulated activities and human interrelations, as well as those that ensure transmission of social experiment are discovered. As one of the forms of regulation of people's social behavior, traditions preserve, fix and reproduce the life-experience of past generations in social relations. During the historical process traditions turn into a particular social institution, into a particular social-cultural mechanism, which helps to construct the value and normative system of the society and conditions for its unimpaired functioning.

During various historical periods social systems survive because thanks to certain mechanisms they are supplemented with new sociocultural values. Traditions are a mode of transmission of life-experience of generations, they are also system of selection, testing and accumulation of social life-experience and thus they legitimate and activate those elements of human life-experience, that support inner organization and stable development of the social system. On the one hand the tradition is individual's mode of adaptation to the socium, and on the other hand, it is a social-cultural tool for regulation of relations within the society.

In the social life the modernity of traditions is based on the fact that they are directly related to comprehension of central events of the past, maintenance of national identity, as well as to national social-cultural values, social-cultural memory, and everyday value orientations.

When social-cultural memory is viewed as an instrument for the construction of social system, it becomes a spiritual readiness to interpret the past, thanks to which life-experience of the past is integrated in the contemporary social-cultural system and contributes to the modernization of the social world at the same time maintaining continuity of past, present and future as well as the intersubjective nature of coexistence.

Social-cultural memory is viewed as a certain criterion that enables reproduction of traditions, and understanding the character of social-cultural processes. In contemporary stage of development of the civilization social-cultural memory is viewed also as a means for modernization of life and planning of the future. It is true that, the contemporary person being alienated from economic, social and spiritual life, attempts to structure and organize her life on the individual level, but having certain national and social identity and feeling of belonging (collective memory), she eventually is led by paradigms of social-cultural memory when organizing and regulating her life.

As the everyday life is the world of intimate relations, where the individual, it seems, shares responsibility with ancestors, in everyday life traditions give humans reliability, confidence and security.

As a mode of constructing the society, traditions, on the one hand, express stability, and as such have the feature of permanence and are transmitted from generation to generation, and on the other hand, they serve as a platform for innovations. Old, tested values and norms regulating peoples thoughts and behavior clash with new, unfamiliar values. In this process on the one hand the conservativeness ensures stability within the society, and on the other, modernity adopts new values and aims at mobility and innovation. Under such conditions of radical transformations traditions fulfill the important function of overcoming social-cultural crises, adaptation to new conditions, reduction of struggle between the old and the new. At the same time, with this process traditions preserve the life-experience of national coexistence and support its modernization. From this point of view, each of contemporary transforming societies, considering peculiarities and life-experience of its national existence, develops the social-cultural principle of regulation of vital activities. The main criterion of reliability of this principle is the balance of ethno-cultural heritage and fundamental civilizational values. From this point of view, tradition is not only stable and reliable basis for national society, but also for its renewal and modernization.

Traditions ensure inclusion of innovation in the development of society and this gives dynamic stability to the system. The ability to transmit traditions from generation to generation is the decisive factor for reproduction for any community. This factor ensures the existence and development of the given social system during a historically lasting stage.